ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նկատի ունենալով գիտատեխնիկական առաջընթացի ներկա տեմպերը և ժողովրդական տնտեսության առջև ծառացած խնդիրները, ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդը խնդիր են դնում արտադրության աճն ապահովել առավելապես ինտենսիվ գործոնների հաշվին, իսկ դա կարելի է իրագործել միմիայն աշխատանքային կարգապահության սկզբունքային բարելավման պայմաններում։ ՍՄԿԿ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումում Մ. Ս. Գորբաչովն այդ կապակցությամբ նշեց. «Այսօր առանձնապես հրատապ է կարգ ու կանոնի և կարգապահության ամրապնդման հարցը։ Սա օրվա հրամայական պահանջն է, որը սովետական մարդիկ պետք է հասկանան լայնորեն, դրա մեջ ներառելով կարգ ու կանոնը արտադրության մեջ և սպասարկման ոլորտում, հասարակական կյանքում և կենցաղում, յուրաքանչյուր աշխատավորական բջջում, յուրաքանչյուր քաղաքում, յուրաքանչյուր գյուղում... Բայց պետք է ուղղակի ասել, վերջին ժամանակներս այդ կարևորագույն հարցի նկատմամբ ուշադրությունը թուլացել է»[1]։

Աշխատանքային կարգապահության բարձրացման պրոբլեմը նոր չէ։ Այն ժողովրդական տնտեսության առջև ծառացել է դեռևս սոցիալիստական հասարակարգի ձևավորման նախաշեմին։ Այդ ժամանակաշրջանում Վ. Ի. Լենինն աշխատանքային կարգապահությունը համարում էր «սոցիալիստական շինարարության առանցքը»[2]։

Սոցիալիստական արտադրահարաբերությունների զարգացմանը զուգընթաց աշխատանքային կարգապահության հարցը ինչպես իր լուծման ուղիների, այնպես էլ արտացոլող հարաբերությունների կատարելագործման տեսակետից զգալի փոփոխություն է կրել։ Սակայն պայմանավորված հանրային արտադրության ինտենսիվացման և գիտատեխնիկական առաջընթացի արագացման հետ՝ վերջին տասնամյակում այս խնդիրն առավել սրությամբ է գրվում։ Դա արտացոլվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1979 թ. դեկտեմբերյան և 1983 թ. հուլիսյան պլենումների որոշումներում։ Աշխատանքային կարգապահության էական բարելավման անհրաժեշտությունը բխում է նաև կառավարման և նյութական համակարգում կատարվող նոր փոփոխություններից, որոնք նախատեսվում է իրագործել 12-րդ հնգամյակի տարիներին։ Աշխատանքային կարգապահության ամրապնդման հարցին ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդն անդրադարձան նաև պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության զարգացման վերաբերյալ 1984 թ. մայիսին ընդունած որոշման մեջ, որտեղ դրվեց պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթության համակարգի սովորողների պրոֆեսիոնալ կողմնորոշման և նրանց տնտեսագիտական գիտելիքների ուսուցման բարելավման հարցը, որն անմիջականորեն առնչվում է աշխատանքային կարգապահության հետ։

Առհասարակ աշխատանքային կարգապահության բարձրացման հարցը քննելիս անհրաժեշտ է, առաջին հերթին, պարզաբանել նրա սոցիալ-տնտեսական բովանդակությունը, այնուհետև անցնել խնդրի կոնկրետ լուծման ուղիների բացահայտմանը։ Դրա անհրաժեշտությունը բացատրվում է ոչ միայն երևույթը տեսական առումով պարզաբանելու, այլև աշխատանքային կարգապահու-

---

1 «Սովետական Հայաստան», 24. IV. 1985։

2 Վ. Ի. Լենին, Նկ, հ. 10, էջ 365։

թյան ամրապնդման կոնկրետ միջոցառումներ առաջադրելու տեսակետից։ Աշխատանքային կարգապահության հասկացության սոցիալ-տնտեսական բովանդակության հարցի մասին տնտեսագիտական գրականության մեջ շատ է նշվել, թեև առ այսօր այդ հարցի շուրջը որոշակի մոտեցում չի ձևավորվել։ Նկատենք, որ ներկայումս այս պրոբլեմով զբաղվում են թե՛ սոցիոլոգները, թե՛ իրավաբանները և թե՛ տնտեսագետները։ Դա բնական է, քանի որ այդ խնդիրը միայն մեկ գիտության շրջանակներում լուծելը թե՛ տեսական, թե՛ գործնական տեսակետից ուղղակի անհնարին է։ Մինչև վերջերս էլ աշխատանքային կարգապահությունը գիտության տարբեր ներկայացուցիչների կողմից ներկայացվում էր որպես իրավագիտական կատեգորիա։ Այսպես, օրինակ, Վ. Յանչուկի կարծիքով աշխատանքային կարգապահությունը «աշխատանքային իրավունքների և պարտականությունների բովանդակությունը կազմող գործողությունների ամբողջություն է»[3], իսկ ըստ Ֆ. Լեվիանտի՝ «աշխատողների կողմից օրենքով նախատեսվող աշխատանքային պարտականությունների բարեխիղճ կատարումն է»[4]։ Այս հեղինակներն աշխատանքային կարգապահության տարրերն են համարում՝ ա) դրված պարտականությունների կատարումը, բ) սահմանված աշխատաժամանակի պահպանումը, գ) հումքի, նյութերի խնայողական օգտագործումը, դ) աշխատանքային նորմաների կատարումը։ Համանման ձևակերպումներ կան նաև «Փիլիսոփայական հանրագիտարանի» և «Հանրագիտական բառարանի» համապատասխան հոդվածներում։ Այսպես, օրինակ, «Հանրագիտական բառարանում» նշվում է, որ «աշխատանքային կարգապահությունը համատեղ աշխատանքի պրոցեսում մարդկանց միջև հարաբերությունները կարգավորող կանոնների ճշգրիտ պահպանումն է»[5]։ Փաստորեն ներկայացված կարծիքները թե՛ առանձին-առանձին և թե ամբողջությամբ վերցրած երևույթը բնութագրում են միայն որոշակի տեսանկյունով՝ աշխատանքային կարգապահությունը հանգեցնելով աշխատանքային պրոցեսը կարգավորող իրավական ու բարոյական նորմերին և այդ նորմերի կատարմանը։ Ըստ այդ մոտեցման՝ աշխատանքային կարգապահության բովանդակությունը կազմում են միայն իրավական և բարոյական բնույթի նորմերն ու կանոնները։

Այս մոտեցմանը հարող տնտեսագետների կարծիքը դժվար է բաժանել հետևյալ նկատառումներով. նրանք նեղացնում են աշխատանքային կարգապահության սոցիալ-տնտեսական բովանդակությունը, քանի որ առանց լուրջ հիմնավորման նրա մեջ չեն ընդգրկում վերջինիս ձևավորման օբյեկտիվ պայմանները, այդ հիմքից բխող նորմերն ու կանոնները։ Վերոհիշյալ հեղինակների համեմատությամբ մի քայլ առաջ են անցնում երևույթը տնտեսական հարաբերությունների տեսակետից դիտարկող հեղինակները։ Այսպես, Ի. Սվիրիդովի և Գ. Կալուգինի կարծիքով, աշխատանքային կարգապահությունը հասարակությունում ձևավորված իրավական ու բարոյական նորմերի և կոլեկտիվ կազմակերպման պահանջների համապատասխան մարդկանց վարքի որոշակի կարգ է[6]։ Ինչպես տեսնում ենք, բերված ձևակերպման մեջ, թեև փորձ է արվում խնդիրը ներկայացնել սոցիալ-տնտեսական պրոցեսների տեսանկյունով, սակայն որոշակիորեն չեն դրվում աշխատանքային կարգապահությունը պայմանավորող հարաբերությունների օբյեկտիվ հիմքերը, չի ներկայացվում այդ տիպի հարաբերությունների առաջնայնության փաստը։

Կարգապահությունն առհասարակ որպես այդպիսին ենթադրում է մարդկանց գործունեության կամ վարքագծի որոշակի ձև։ Կարգապահության, մասնավորապես հասարակական կարգապահության առավել բնորոշ ձևակերպման

---

[3] В. З. Янчук, Прием на работу, перевод, дисциплина труда и увольнение работников. М., 1976, с. 9.

[4] Ф. М. Левиант, Социалистическая дисциплина труда, Л., 1953, с. 5.

[5] «Энциклопедический словарь». М., 1958. с. 560.

[6] И. В. Свиридов. Г. П. Калугин, Воспитание социалистической дисциплины труда, М., 1973, с. 8.

հանդիպում ենք «Հայկական սովետական հանրագիտարանում», որտեղ ասվում է. «Հասարակական կարգապահություն— վարքի կարգավորման ձև, որը մարդկանց պարտադրում է հաստատված իրավական, բարոյական, քաղաքական նորմերի կատարումն ու ապահովում է կոլեկտիվներում մարդկանց գործողության համաձայնեցվածություն»[7]։

Մարդկանց գործողության նպատակից և այդ գործողությունը պայմանավորող հարաբերությունների բնույթից ելնելով՝ առանձնացնում ենք կարգապահության մի քանի տեսակներ՝ պետական, հասարակական-քաղաքական, զինվորական, ուսումնական, բուհական և այլն։ Կարգապահության տեսակների մասին թեև տնտեսագիտական գրականության մեջ հաճախ է գրվում, սակայն և ոչ մի հեղինակ կարգապահության տեսակների տարբերակման հարցը չի դնում։ Ոչ մի տեղ չեն արձանագրվում նաև կարգապահության տեսակների առաջացման սկզբունքները։ Իսկ դա շատ կարևոր է ընդհանրապես կարգապահության, մասնավորապես աշխատանքային կարգապահության սոցիալ-տնտեսական բովանդակությունը բացահայտելու համար։

Տնտեսագիտական գրականության մեջ հասարակական կարգապահության, մասնավորապես նրա ձևերի ու տեսակների առավել խոր ուսումնասիրությամբ հանդես է եկել Մ. Սոնինը։ «Աշխատանքային կարգապահությունը,— գրում է նա,— կոմպլեքսային հասկացություն է. մարդկանց գործունեության այս կամ այն ձևի կազմակերպումը ստեղծում է կարգապահության համապատասխան տեսակ»[8]։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ կարգապահության ձևավորման հիմքը մարդկանց գործունեությունն է, նրա որոշակի տեսակը։ Հիմք ընդունելով դա, Մ. Սոնինը ներկայացնում է հասարակական կարգապահությունների փոխհարաբերության որոշակի սիստեմ[9], որտեղ սակայն չի պահպանում նրա կազմման հիմքում դրած սկզբունքը։ Հասարակական քաղաքական կարգապահության ենթաբաժիններում կարգապահությունը ներկայացվում է ըստ առանձին կազմակերպությունների, պետական կարգապահությունը՝ ըստ առանձին ֆունկցիաների։ Անհասկանալի է նաև աշխատանքային կարգապահության տեսակների բաժանման սկզբունքը։ Փաստորեն, թե՛ բերված, և թե հետագայում հեղինակի կողմից այդ ուղղությամբ կատարված դատողություններում անտեսվում է կարգապահության տեսակները պայմանավորող հարաբերությունների բնույթը, չի պահպանվում այդ հարաբերությունների մեջ տնտեսական հարաբերությունների առաջնայնության սկզբունքը։ Մինչդեռ դա խիստ անհրաժեշտ է աշխատանքային կարգապահության բնույթը պայմանավորող սոցիալ-տնտեսական հարաբերությունների էությունը պարզաբանելու համար։ Մարքսիզմի կլասիկները բազմիցս նշել են հասարակական երևույթների զարգացման գործում արտադրական հարաբերությունների վճռորոշ դերը։ Նրանց կարծիքով՝ տիրապետող արտադրահարաբերություններն են որոշում աշխատանքի բնույթը, նրա կազմակերպման սկզբունքներն ու մեթոդները։ Անկախ այդ հարաբերությունների դրսևորման ձևերից ու դրանց ընդգրկման ոլորտներից, տիրապետող արտադրահարաբերություններն աշխատանքի նոր տիպի կազմակերպման անհրաժեշտություն են ենթադրում։ Աշխատանքի նոր տիպի կազմակերպման անհրաժեշտությունը ձևավորվում է նոր տնտեսական օրենքների պահանջների անմիջական թելադրմամբ։ Ակնհայտ է, որ արտադրության, ինչպես նաև աշխատանքի նոր տիպի կազմակերպումը տնտեսական որոշակի կարգապահության անհրաժեշտություն է, առանց որի տնտեսական հարաբերություններն իրացվել չեն կարող։ Դա նշանակում է, կարգապահությունը պատմական կատեգորիա է. այն տվյալ արտադրաեղանակում բխում է տիրապետող արտադրահարաբերությունների բնույթից, փոփոխվում է նրան զուգընթաց։ Այդ տեսակետից տնտեսական կարգապահությունը հավասարազոր է

7 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5, էջ 314։

8 М. Я. Сонин. Социалистическая дисциплина труда, М., 1977, с. 43.

9 Նույն տեղում, էջ 48—52։

տնտեսավարման կարգ հասկացությանը։ Նշանակում է սոցիալիստական արտադրահարաբերությունների տիրապետության պայմաններում աշխատանքի նոր տիպի կազմակերպումը ստեղծում է տնտեսական կարգապահության մի նոր տիպ, ձև, կարգ։ Այն իր մեջ ամբողջացնում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների որոշակի համակարգ, որը ձևավորվում է սոցիալիզմին հատուկ տնտեսական օրենքների անմիջական թելադրմամբ։ Այդ տեսակետից սոցիալիզմի պայմաններում տնտեսական կարգապահությունն ամփոփում է ոչ միայն անհատի ու կոլեկտիվի, այլև առանձին կոլեկտիվների միջև այդ կապակցությամբ ձևավորված հարաբերությունները։

Այսպիսով, սոցիալիստական արտադրահարաբերությունների պայմաններում տնտեսական կարգապահությունն արտադրության պրոցեսում անհատի, կոլեկտիվի, առանձին կոլեկտիվների ու հասարակության միջև ձևավորված սոցիալ-տնտեսական հարաբերությունների իրացման որոշակի կարգ է։

Տնտեսական կարգապահությունն անմիջականորեն ենթարկվում է սոցիալիզմի տնտեսական օրենքների պահանջներին։ Այն առաջին հերթին գործում է սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքի պահանջին համապատասխան։ Այս տեսակետից տնտեսական կարգապահությունն ամփոփում է սոցիալ-տնտեսական այնպիսի հարաբերություններ, որոնք ուղղված են հանրային արտադրության արդյունավետության բարձրացմանը և բնակչության պահանջմունքների ավելի բարձր մակարդակով բավարարմանը։ Տնտեսական կարգապահության կապը որոշակի է նաև հանրային արտադրության պլանաչափ համամասնական զարգացման օրենքի հետ։ Որպես այդպիսին՝ տնտեսական կարգապահությունը հանդես է գալիս իբրև տնտեսության համամասնական զարգացման կարևորագույն պայման։ Այդ տեսակետից տնտեսական կարգապահության խախտումը կարող է հանգեցնել տնտեսության համամասնական զարգացման ընթացքի խախտմանը, ինչպես նաև ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի զարգացման տեմպերի միջև անհամամասնությունների առաջացմանն ու խորացմանը։ Տնտեսական կարգապահությունը շաղկապված է նաև աշխատանքի բաշխման ու աշխատաժամանակի տնտեսման օրենքների հետ։ Ինքնին տնտեսական կարգապահությունը ենթադրում է աշխատաժամանակի պլանաչափ օգտագործում, իսկ դա արտադրության ինտենսիվացման կարևորագույն պայմանն է։ Բնական է, որ տնտեսական կարգապահության ամրապնդումն առաջին հերթին ուղեկցվում է աշխատաժամանակի տնտեսմամբ, իսկ դա անմիջականորեն արտահայտվում է աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ։ Դա նշանակում է, որ տնտեսական կարգապահությունը փոխկապակցված է նաև աշխատանքի արտադրողականության անշեղ աճի օրենքի հետ։ Ըստ աշխատանքի բաշխման օրենքը նույնպես որոշակիորեն շաղկապված է տնտեսական կարգապահության հետ։ Այդ օրենքի պահանջներին համապատասխան նյութական խթանման սիստեմի նորմալ գործունեությունը տնտեսական կարգապահության ամրապնդման կարևորագույն պայմաններից է։

Տնտեսագիտական դրականության մեջ տնտեսական կարգապահության գոյության փաստն անհիմն ձևով անտեսվում է։ Ավելին, այդ ուղղությամբ հրապարակված ուսումնասիրություններում կարգապահական հարաբերություններն ամփոփվում են աշխատանքային կարգապահություն հասկացության շրջանակներում, մինչդեռ վերջինս ընդգրկում է տնտեսական հարաբերությունների միայն մի մասը։ Տնտեսական կարգապահությունն ընդգրկում է տնտեսավարման բոլոր տեսակի հարաբերություններն իրենց տարատեսակություններով հանդերձ։ Այդ պատճառով էլ այն ավելի լայն հասկացություն է։

Աշխատանքային կարգապահությունն ամփոփում է կոնկրետ աշխատանքի պրոցեսը կարգավորող հարաբերությունները։ Տնտեսական կարգապահությունը որոշակիորեն առնչվում է աշխատանքի փոփոխման օրենքի հետ, որը, Կ. Մարքսի բնորոշմամբ, «աշխատանքային ֆունկցիաների և բանվորների շար-

ժունակության մի կոմպլեքսն է»[10]։ Այսպես, գիտատեխնիկական առաջընթացը որակական նոր փոփոխություններ է առաջացնում աշխատանքի բովանդակության մեջ, այսինքն աշխատանքի ֆունկցիոնալ կառուցվածքում։ Դա, զուգակցվելով աշխատանքի բաժանման հետագա խորացման հետ, ստեղծում է աշխատուժի պրոֆեսիոնալ ու .որակական կառուցվածքի, ինչպես նաև աշխատանքի ֆունկցիոնալ կառուցվածքի կատարելագործման մի նոր անհրաժեշտություն։

Տնտեսական կարգապահությունն ամփոփում է սոցիալիստական տնտեսավարման պրակտիկայում ձևավորված բոլոր տեսակի կարգապահական հարաբերությունները։ Կարգապահության յուրաքանչյուր տեսակ արտահայտում է միայն որոշակի շրջանակի կարգապահական հարաբերություններ։ Այսպես, օրինակ, պետական կարգապահությունն արտահայտում է պետական մարմինների կողմից սահմանված օրենքների և այդ օրենքները կարգավորողների միջև ձևավորված հարաբերություններ։

Տնտեսական կարգապահությունն արտահայտող հարաբերություններն արտացոլում են հասարակական մյուս բոլոր տեսակի կարգապահությունների էությունն ու բնույթը։ Բնական է, որ տնտեսական օրենքների պահանջների և տնտեսավարման իրական վիճակի միջև միշտ որոշակի հակասություն կարող է ստեղծվել։ Տնտեսական օրենքների պահանջները անտեսելու պայմաններում այն կարող է ծագել անհատի, կոլեկտիվի և հասարակության շահերի միջև գոյություն ունեցող հակասությունների ձևով։ Բնական է, որ նման իրավիճակ կարող է ստեղծվել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոնների անմիջական թելադրմամբ։ Այսպես, օրինակ, ինչպես հայտնի է, առանձին ռեգիոնի և ընդհանուր տնտեսության շահերը որոշ դեպքերում կարող են միմյանցից խիստ տարբերվել։ Այս հանգամանքը որոշակի կոնկրետ իրավիճակում կարող է պայմաններ ստեղծել տնտեսական կարգապահության խախտման համար։ Դա կարող է առաջին հերթին առաջանալ առանձին ռեգիոնների արտադրողական ուժերի զարգացման մակարդակների միջև գոյություն ունեցող տարբերության հետևանքով։ Բնական է, որ լոկ այդ մակարդակների հավասարման պայմաններում կվերանան կարգապահական նման խախտումները, իսկ դա կարող է իրականացվել միայն տնտեսական օրենքների ավելի ճիշտ կիրառման հիման վրա։ Օբյեկտիվ բնույթ կարող են ունենալ նաև այդ հիմքով ձևավորված հակասություններն անհատի ու կոլեկտիվի, անհատի ու հասարակության, կոլեկտիվի ու հասարակության միջև։ Այսպես, օրինակ, անհատը փոխում է իր աշխատավայրը (որտեղ նա պարտավոր է աշխատել), պատճառաբանելով աշխատավարձի ցածր լինելը։ Բնական է, որ այստեղ տվյալ անհատը, թեև որոշակի հակասության մեջ է գտնվում հասարակության շահերի հետ, սակայն նրա վարքագիծը որոշակիորեն արդարացվում է։ Այն թելադրվում է ըստ աշխատանքի բաշխման և աշխատուժի ծախսումների փոխհատուցման օրենքների պահանջներով։ Հաճախ տնտեսական կարգապահական խախտումները (անհատի ու հասարակության, անհատի ու կոլեկտիվի, առանձին կոլեկտիվների, կոլեկտիվների և հասարակության միջև) ծագում են սուբյեկտիվ հիմքերով. դրանք, բնական է, արդարացման ոչ մի հիմք ունենալ չեն կարող։ Այսպես, օրինակ, անհատը խախտում է աշխատանքային կարգապահությունը, փչացնում աշխատանքի գործիքները, չարաշահում իր իրավունքները, թերանում է պարտականություններում։ Բնական է, որ այս հիմքով ստեղծված հակասությունները սուբյեկտիվ բնույթ են կրում և որևիցէ արդարացում ունենալ չեն կարող։

Վերոհիշյալից ելնելով հասարակական կարգապահության փոխհարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ կարգով. հասարակական կարգապահություն-տնտեսական կարգապահություն. տնտեսական կարգապահու-

---

10 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1954, էջ 511։

թյունը իր հերթին բաժանվում է արտադրատնտեսական, հասարակական-քաղաքական և պետական կարգապահության։ Ստորաբաժանումներից յուրաքանչյուրն իր հերթին կբաղադրվի կարգապահական առանձին տեսակների։ Այսպես, օրինակ, արտադրատնտեսական կարգապահությունը պետք է բաժանվի արտադրական և աշխատանքային կարգապահության, իսկ պետական կարգապահությունը՝ պլանային, պայմանագրային և զինվորական կարգապահության։

Ինչպես տեսնում ենք, հասարակական կարգապահության կառուցվածքում կարգապահական հարաբերությունների տեսակները որոշակիորեն առանձնացվում են։ Այսպես, արտադրության պրոցեսում ձևավորված տնտեսական, արտադրական հարաբերությունները ներկայացված են որպես կարգապահական հարաբերությունների առանձին տեսակ, իսկ աշխատանքի պրոցեսում ձևավորված կարգապահական հարաբերությունները՝ իբրև առանձին կարգապահության տեսակ։ Այսպիսի բաժանումը պատճառաբանվում է հետևյալով. արտադրության պրոցեսում կարգապահական հարաբերությունները զարգանում և առանձնանում են հիմնականում երկու ուղղությամբ՝ աշխատանքի պրոցեսում ձևավորված հարաբերությունների (անհատի-կոլեկտիվի, առանձին անհատների, անհատի-հասարակության միջև) և արտադրության պրոցեսում ձևավորված կարգապահական հարաբերությունների (միևնույն տնտեսական օղակի տարբեր կոլեկտիվների միջև, տարբեր տնտեսական օղակների և կոլեկտիվների միջև) ուղղությամբ։ Կարգապահական հարաբերությունների այս երկու տեսակներն աշխատանքային կարգապահության բովանդակության մեջ սահմանափակելու փորձը, որը տնտեսագիտական գրականության մեջ հաճախ է կիրառվում, անընդունելի է։ Ինչպե՞ս կարելի է արտադրության պրոցեսին բնորոշ հարաբերություններն ամփոփել միայն աշխատանքի պրոցեսում։ Դա թե՛ տեսական և թե կիրառական տեսակետներից սխալ է։ Արտադրության պրոցեսին բնորոշ կարգապահական հարաբերությունները նաև տնտեսական են։ Դա պարզորոշ երևում է, երբ քննում ենք մատակարարի և գնորդ կազմակերպության կարգապահական հարաբերությունները։ Դրա հետ մեկտեղ, սակայն, որոշ տնտեսագետների կողմից աշխատանքային կարգապահական հարաբերությունների համակարգում առանձնացվում է տեխնոլոգիական կարգապահություն հասկացությունը[11]։ Մեր կարծիքով այդ առանձնացումը զուրկ է որոշակի հիմքերից։ Եվ, իրոք, ինչ իմաստ ունի տեխնոլոգիական կարգապահության առանձնացումը, երբ տեխնոլոգիական ռեժիմի պահպանումն աշխատանքի պրոցեսի անբաժանելի մասն է։ Աշխատանքայինի կարգապահությունն առանց աշխատանքի ռեժիմի պահպանության պատկերացնելն անհնարին է։ Իրավիճակը բոլորովին այլ կլինի, եթե ընդունենք, որ աշխատանքային կարգապահությունը միայն աշխատաժամանակի լավ օգտագործումը, աշխատաժամանակի սահմանված կարգի պահպանումն է։ Այս դեպքում, բնական է, տեխնոլոգիական կարգապահությունը բնականորեն հանդես կգա որոշակի համասեռ հարաբերությունների ձևով։ Սակայն, իրականում, դա այդպես չէ։ Աշխատանքային կարգապահության հարաբերություններն ամփոփում են թե՛ աշխատաժամանակի սահմանված կարգի պահպանման, թե՛ նրա լրիվ օգտագործման, թե՛ նյութական աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թե՛ աշխատանքային ու տեխնոլոգիական ռեժիմի պահպանման ուղղությամբ ձևավորված բոլոր տիպի հարաբերությունները։

Աշխատանքային կարգապահությունն ընդգրկում է կոնկրետ աշխատանքի պրոցեսը կարգավորող հարաբերություններ. այդ տեսակետից այն որոշակիորեն առանձնանում է կարգապահական մյուս հարաբերություններից և ձեռք բերում հարաբերական ինքնուրույնություն։ Աշխատանքային կարգապահության տոցիալ-տնտեսական բովանդակությունը պարզելու նպատակով որոշ տնտեսա-

11 Տե՛ս օրինակ, М. Я. Сонин, նշվ. աշխ., էջ 50։

գետներ այդ հասկացությունը բաժանում են աշխատանքի և աշխատանքային կարգապահական հարաբերությունների։ Նրանց կարծիքով աշխատանքի կարգապահությունն ավելի լայնիմաստ հասկացություն է, իսկ աշխատանքային կարգապահությունը՝ նեղ։ Այսպես, «տվյալ աշխատանքում աշխատանքային կարգապահության իրավիճակի կոնկրետ վերլուծության ժամանակ,— գրում է Մ. Սոնինը,— մենք խիստ տարբերություն չենք գնում «աշխատանքի կարգապահություն» և «աշխատանքային կարգապահություն» հասկացությունների միջև, թեև տվյալ հարցի տեսական քննարկման ժամանակ որոշակի տարբերություններ նշմարվում են հիմնականում երկու ուղղությամբ։ Առաջին՝ աշխատանքի պրոցեսում գործող կարգապահության, երկրորդ՝ նրա բաղկացուցիչ տարրերի որոշման ուղղությամբ»[12]։ Որոշ տնտեսագետներ էլ աշխատանքի կարգապահություն հասկացությանը լայն իմաստ են վերագրում, իսկ աշխատանքային կարգապահությանը՝ նեղ[13]։ Տնտեսագետների մեկ այլ խումբ աշխատանքային կարգապահություն հասկացությունը ներկայացնում է օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով[14]։ Օբյեկտիվ իմաստով այդ հասկացությունը ներկայացվում է որպես ձեռնարկությունների և կազմակերպությունների կազմում առկա աշխատողների համար սահմանված վարքի կանոնների ամբողջություն, սուբյեկտիվ իմաստով՝ հաստատված կանոնների կատարում։ Մեր կարծիքով, խնդրին մոտենալու մեթոդի տեսակետից վերոհիշյալ հեղինակները դրական որոշ առաջընթաց են կատարել, սակայն վերջին հաշվով հանգել են արդեն վերը նշված տեսակետին։ Փաստորեն, մյուսների նման, այս հեղինակներն աշխատանքային կարգապահության օբյեկտիվ հիմքը համարում են իրական նորմերը, դրանց կատարումը, այսինքն երևույթը կրկին ներկայացնում են միայն իրավական տեսանկյունով։

Աշխատանքային կարգապահության ձևավորման մեխանիզմը որոշակիորեն ներկայացրել է Կ. Մարքսը, թեև տնտեսագիտական գրականության մեջ այդ փաստի վրա նույնպես ուշադրություն չի դարձվել։ Այսպես, քննելով կապիտալիստական արտադրահարաբերությունների տիրապետության պայմաններում աշխատանքի հասարակական բաժանման դրսևորման ձևերը, նա գրել է. «Ակներև է, որ առանձին աշխատանքների, հետևապես նաև բանվորների այդ անմիջական փոխադարձ կախումը նրանցից ամեն մեկին հարկադրում է իր ֆունկցիայի վրա գործադրելու միայն անհրաժեշտ աշխատաժամանակը, որի հետևանքով ստեղծվում է աշխատանքի բոլորովին մեկ այլ անընդհատություն, միատեսակություն, կանոնավորություն, կարգ և հատկապես լարվածություն, քան այդ գոյություն ունի. ինքնուրույն արհեստի մեջ և նույնիսկ պարզ կոոպերացիայում»[15]։ Այնուհետև նա տողատակում ավելացրել է. «որքան բազմազանություն կա մանուֆակտուրայի աշխատողների միջև, այնքան ավելի մեծ է ամեն մի աշխատանքի կարգն ու կանոնավորությունը»[16]։ Սա նշանակում է, որ Կ. Մարքսը որոշակիորեն տվել է կոլեկտիվ աշխատանքում ձևավորվող աշխատանքի կարգապահության գործողության մեխանիզմը, աշխատողների թվի, նրա պրոֆեսիոնալ կազմի ու աշխատանքի կարգի (կարգավորվածության) միջև գոյություն ունեցող կապը։ Կ. Մարքսը նմանապես բացահայտել է աշխատանքի ֆունկցիոնալ բաժանման հետևանքով աշխատուժի բանակային համամասնությունների և աշխատանքային հարաբերությունների

---

12 Նույն տեղում, էջ 47։

13 «Экономика труда», под редакцией Н. А. Иванова и Г. П. Мечковского, М., 1976, с. 149—150; «Основа НОТ на предприятиях», под ред. И. А. Полякова, М., 1976, с. 228.

14 Н. Г. Александров, Трудовые правоотношения, М., 1968, с. 126; И. Я. Ямпольская и Е. В. Шорина, Административные правоотношения и вопросы укрепления государственной дисциплины, М., 1979, с. 22.

15 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 364։

16 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, էջ 364։

փոփոխության մեխանիզմը։ Նա գրել է. «Որակական անդամատման հետ միասին այդ բաժանումը զարգացնում է աշխատանքի հասարակական պրոցեսի քանակական նորմաներն ու պրոպորցիաները»[17]։ Իսկ դա, ինչպես արդեն նշել ենք, պայմանավորում է աշխատանքային կարգապահությանը բնորոշ հարաբերությունները։

Բնական է, որ արտադրական գործունեության կոլեկտիվ իրագործումը ծնում է աշխատանքի որոշակի ռեժիմ, աշխատանքային որոշակի կարգ։ Դա իր հերթին աշխատանքի նոր կազմակերպման պահանջ է ներկայացնում։ Սոցիալիստական աշխատանքի կազմակերպման սկզբունքների վրա հիմնված աշխատանքային կարգապահությունն օբյեկտիվ բնույթ ունի, բխում է սոցիալիզմի տնտեսական օրենքների պահանջներից։ Միաժամանակ, սոցիալիստական աշխատանքային կարգապահությունը սոցիալ-հոգեբանական ու բարոյական այն հարաբերությունների կրողն է, որոնք ձևավորվում են աշխատանքի պրոցեսում։ Աշխատանքային կարգապահության այս կողմը սուբյեկտիվ բնույթ ունի։ Այդ հարաբերությունները կարող են ձևավորվել ինչպես առանձին կոլեկտիվների աշխատանքի կազմակերպման ձևի ու կարգի, այնպես էլ կոլեկտիվների և առանձին անհատների առանձնահատկությունների հիման վրա։

Այսպիսով, ընդհանրացնելով ասվածը, կարելի է եզրակացնել, որ աշխատանքային կարգապահությունը համատեղ աշխատանքի պրոցեսում անհատի, կոլեկտիվի ու հասարակության միջև ձևավորված սոցիալ-տնտեսական հարաբերությունների և այդ հիմքով ստեղծված հոգեբանական ու բարոյական հարաբերությունների իրացման որոշակի կարգ է, տվյալ հասարակարգին բնորոշ տնտեսական կարգապահության կարևորագույն բաղկացուցիչ մասը։

ЭКОНОМИЧЕСКИЕ АСПЕКТЫ ДИСЦИПЛИНАРНЫХ ОТНОШЕНИЙ

АРСЕН ПЕТРОСЯН

Резюме

В экономической литературе ряд исследователей рассматривает дисциплинарные отношения только с юридической стороны, игнорируя необходимость исследования данной проблемы с позиции социально-экономических отношений. Между тем в системе дисциплинарных отношений социально-экономические отношения играют первостепенную роль. В этом аспекте необходимо прибегнуть к понятию экономическая дисциплина, отражающему экономическую сторону дисциплинарных отношений. Экономическая дисциплина представляется как определенная форма реализации социально-экономических отношений, складывающихся между людьми, коллективом и обществом в процессе хозяйственной деятельности. С этой точки зрения трудовая дисциплина является определенной формой реализации тех же отношений, складывающихся в процессе трудовой деятельности.

---

17 Կ. Մարքս, Կապիտալ հ. I, էջ 380։